ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտարկումները և առաջարկը «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և հանրային քննարկման է դրվել «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը[1] (այսուհետ՝ Նախագիծ)։ Համաձայն Նախագծի հիմնավորման՝ «առաջարկվող լուծումներով արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին»։

Ողջունելով արհեստակցական միությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և նշված գործունեությանն առնչվող կարգավորումների համապատասխանեցումը միջազգային պարտավորություններով սահմանված պահանջներին, միաժամանակ պետք է նշել, որ Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը **հակասում է** Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (այսուհետ՝ Խարտիա), «Աշխատանքի միջազգային կազմակերպության» (այսուհետ՝ ԱՄԿ) «Աշխատողների ներկայացուցիչների մասին» թիվ 135 կոնվենցիայի և դրան կից «Աշխատողների ներկայացուցիչների մասին» թիվ 143 հանձնարարականի պահանջներին։

Մասնավորապես, Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվում է «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Արհեստակցական կազմակերպության անդամի դիմումի առկայության դեպքում գործատուն, արհեստակցական կազմակերպության կանոնադրությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում, կազմակերպում է արհմիութենական անդամավճարի գանձումը և փոխանցումը արհեստակցական կազմակերպության բանկային հաշվի համարին»։

[1] https://www.e-draft.am/projects/5085/about

Առաջարկվող կարգավորման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա ընդունվելու դեպքում **գործատուն այնս չի կրելու պարտականություն՝ արհեստակցական միության աշխատանքների կազմակերպման և կատարման համար արհեստակցական միությանն անհրաժեշտ պայմաններ տրամադրելու համար,** ինչը գնահատում ենք խիստ խնդրահարույց: Մասնավորապես, համաձայն Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի գործող իրավակարգավորման՝ **գործատուն, կոլեկտիվ պայմանագրով (համաձայնագրով) սահմանված կարգով, արհեստակցական միությանը տրամադրում է անհրաժեշտ պայմաններ՝ արհեստակցական միության կանոնադրությամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման և կատարման համար:**

Խարտիայի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ **«ձեռնարկություններում աշխատողների ներկայացուցիչները** պաշտպանվածության իրավունք ունեն իրենց դեմ ուղղված վնասաբեր գործողություններից, և նրանց **պետք է տրամադրվեն համապատասխան հնարավորություններ իրենց գործառույթների կատարման համար,»**[2]:

Խարտիայի 28-րդ հոդվածի համաձայն՝ **«Աշխատողների ներկայացուցիչների գործառույթների իրականացման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են երաշխավորել, որ ձեռնարկությունում՝**

ա) նրանք կօգտվեն հուսալի պաշտպանությունից իրենց վնասող գործողություններից, ներառյալ ձեռնարկությունում որպես աշխատողների ներկայացուցիչներ նրանց կարգավիճակի կամ գործունեությունների համար աշխատանքից ազատումը,

բ) նրանց կտրվեն այնպիսի հնարավորություններ, որոնք կարող են հնարավորության տալ նրանց արագ և արդյունավետ ձևով իրականացնելու իրենց գործառույթները՝ հաշվի առնելով երկրի արդյունաբերական հարաբերությունների համակարգը և համապատասխան ձեռնարկության կարիքները, ծավալները և հնարավորությունները»[3]:

ԱՄԿ «Աշխատողների ներկայացուցիչների մասին» թիվ 135 կոնվենցիան սահմանում է, որ աշխատողների ներկայացուցիչներին պետք է տրամադրվեն անհրաժեշտ միջոցներ իրենց գործունեությունը արդյունավետ և պատշաճ իրականացնելու համար: Նման պահանջ է սահմանված կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝ **«Ձեռնարկության աշխատավորների ներկայացուցիչներին տրամադրվում են այնպիսի հնարավորություններ, որոնք նրանց թույլ են տալիս իրենց գործառույթներն իրականացնել արագ և արդյունավետ»**[4]: Գործատուի համար նույնաբովանդակ պահանջ ամրագրված է նաև «Աշխատողների ներկայացուցիչների մասին» թիվ 135 կոնվենցիային կից «Աշխատողների ներկայացուցիչների մասին» թիվ 143 հանձնարարականում, որի 16-րդ կետը սահմանում է, որ **գործատուն պարտավոր է աշխատողների ներկայացուցիչներին ապահովել**

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230
[3] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230
[4] https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100_INSTRUMENT_ID:312280:NO

այնպիսի նյութատեխնիկական պայմաններով, որոնք կարող են անհրաժեշտ լինել իրենց պարտականությունների կատարման համար[5]: Գտնում ենք, որ առաջարկվող կարգավորումը հակասում է նշված փաստաթղթերի պահանջներին, խախտում է ինչպես աշխատողների, այնպես էլ վերջիններիս ներկայացուցիչների իրավունքներն այն ծավալով, որ նման պայմաններում գործնականում կարող է ստեղծվել մի իրավիճակ, որը կվտանգի արհմիությունների բնականոն գործունեությունը, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել աշխատանքային իրավունքների խախտմանը, քանի որ, **բացի օրենսդրական կարգավորումներով սահմանված հնարավորություններից, արհմիությունները պետք է ունենան նաև աշխատող անձանց իրավունքները պաշտպանելուն ուղղված գործունեության իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:** Հակառակ դեպքում կսահմանափակվի աշխատանքային իրավունքների կոլեկտիվ պաշտպանության առանց այդ էլ թույլ մեխանիզմների արդյունավետությունը, իսկ սոցիալական գործընկերությանը վերաբերող իրավական փատաթղթերն ու պայմանագրերը կշարունակեն կրել միայն հռչակագրային բնույթ:

Հետևաբար, հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկում ենք Նախագծից հանել 6-րդ հոդվածը:

Հարկ է նշել, որ քննարկվող հարցի վերաբերյալ նույնաբովանդակ դիրքորոշում է ներկայացրել նաև Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների ճյուղային հանրապետական արհմիությունը՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ[6]:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

[5] https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:::NO:12100:P12100_ILO_CODE:R143:NO
[6] https://www.e-draft.am/ru/projects/4129/digest